«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցական կարողունակությունների ձևավորման հիմնահարցը

Դաստիարակ՝ Արևիկ Նազյան

Մանկապարտեզ՝ Աբովյան համայնքի 《Աբովյան քաղաքի թիվ 6 մանկապարտեզ 》 ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....5
1.2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ.....5
1.2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8
ԳԼՈՒԽ 2: ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 11
2.1 Նախադպրոցականների ստեղծագործական կարողունակությունների հիմնական էությունը.....11
2.2. Նախադպրոցականների ստեղծագործական կարողունակությունների կիրառելիությունը դիտակտիկ նյութերի միջոցով 14
Պարապմունքի ընթացք 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....22
Օգտագործված գրականության ցանկ՝ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը: Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Այն ներառում է, մասնավորապես, ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները, երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը, երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը: Ընտրված աշխատանքի արդիականությունը պայմանավորված է հենց նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ներդրման հետևանքով նախադպրոցական տարիքի երեխաների մոտ համապատասխան կարողունակությունների ձևավորման կարևորությամբ և անհրաժեշտությամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցականներրի մանկավարժական կարողունակությունների զարգացման խնդիրներին վերաբերող մանկավարժական գրականությունը, բացահայտել մանկավարժական կարողունակությունների կիրառման առանձնահատկությունները, ուսումնասիրել մանկավարժական կարողունակությունների զարգացման հնարավորությունները:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Մեր առջև դրված նպատակի իրականացման համարն առանձնացրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել մանկավարժական կարուղունակութունների զարգացման միջոցները

2. առանձնացնել նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները.
3. վերլուծել նախադպրոցական կրթության պետական չափորոշչի հիմնական դրույթները

Աշխատանքի տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության կողմից 2021թ. մայիսի 13-ին հաստատված նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, ինչպես նաև մի շարք այլ աղբյուրներ, այդ թվում մասնագիտական գրականություն:

Աշխատանքի ընթացքը և բաժինները: Աշխատանքը բաղկացած է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, տեսական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, աշխատանքի ծավալը կազմում է 23 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է:

Չափորոշիչը ներառում է՝

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները.

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը.

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը.

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը.

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

4. Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը. հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին և

հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

5. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

6. Ըստ չափորոշչի, մշակվում են միջին և բարձրագույն մասնագիտական հաստատությունների նախադպրոցական ֆակուլտետների (բաժինների) ուսումնական ծրագրեր և վերապատրաստումների թեմատիկ պլաններ, ծնողական կրթության ծրագրեր:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքային բոլոր փուլերի զարգացման անհատական առանձնահատկություններով և հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.

2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.

3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.

4) իմացական ոլորտ.

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է զարգացման հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

2) հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3) շարժողական և ֆիզիկական զարգացում.

4)աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5) բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

Երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը և հարաբերակցությունը փոխկապակցված են կրթության բովանդակության, երեխայի

տարիքային առանձնահատկությունների և անհատական հնարավորությունների, ուսուցման ձևերի և մեթոդների, հաստատության աշխատանքային ռեժիմի հետ:[1]

Հավելենք նաեւ, որ չափորոշչով տրված են նաև խմբասենյակների ձևավորման հիմնական պահանջները, թե ինչ սարքավորումներ և խաղալիքներ ու նյութեր պետք է ապահովվեն երեխայի ներդաշնակ զարգացման համար: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող սարքերը, սարքավորումները, խաղալիքներն ու նյութերը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին և սահմանված առողջապահական նորմերին:

Չափորոշչում սահմանված են նաեւ երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները՝ ըստ տարիքային խմբերի: Օրինակ՝ մինչև 1 տարեկան երեխաները պետք է ապահովվեն մանկական երաժշտական գործիքներով, նկարազարդ, կտորից գրքերով, գունավոր մատիտներով, ճոճանակով եւ այլն: Մահճակալների վերևի մասում պետք է տեղակայված լինեն չխկչխկաններ:

1-ից մինչև 3 տարեկան երեխաների խմբասենյակում պետք է առկա լինեն խճանկարներ, «մատրյոշկա» տիկնիկներ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, գունեղ նկարներով գրքեր, գրենական պիտույքներ:

Իսկ 3-ից մինչև 6 տարեկան երեխաների խմբասենյակում նախատեսվում են բազմապիսի դիդակտիկ խաղեր (լոտո, դոմինո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ (դոմինո, շաշկի, շախմատ և այլն), ազգային եւ այլազգի կենցաղի առարկաների նմուշներ:

Չափորոշչով նախատեսվում է շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար խմբասենյակում և դրանից դուրս ունենալ հարմարեցված աթոռ-սեղան, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ՝ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք, հարմարեցված գրենական պիտույքներ:

[1] https://www.arlis.am/ **Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշում** 13 մայիսի 2021 թվական.

1.2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝

- **լեզվական և հաղորդակցական կարողունակություն՝**

Երեխան տիրապետում է գրական հայերենին, հաղորդակցվում տարբեր իրավիճակներում և միջավայրերում, դրսևորում խոսքային և ոչ խոսքային ակտիվություն՝ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին: Ընդունակ է ճանաչել բանավոր ներկայացվող երևույթները, ըմբռնել, նկարագրել, մեկնաբանել դրանք, ներկայացնել բացատրություններ: Երեխան ունակ է կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի, հնչյունի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին: Այլ մարդկանց հետ հաղորդակցության մեջ պատկերացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը և մեծահասակների օգնությամբ կիրառում դրանք.

- **ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն՝**

Երեխան, իր տարիքին համապատասխան, ընդունակ է պատճառահետևանքային կապեր տեսնել երևույթների, իրադարձությունների միջև, ճանաչել առարկաների և օբյեկտների կապերը, հարաբերությունները, նոր խնդիրներ լուծել: Դրսևորում է ակտիվություն, հետաքրքրասիրություն, ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների, ինչպես նաև

հարաբերությունների կառուցման հանդեպ: Երեխան հաճույքով (ակտիվ) ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ.

- **ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն՝**

Երեխան ճանաչում է իր արտաքին առանձնահատկությունները, ձեռք է բերում սեռադերային պատկերացումներ: Երեխան ունի պատկերացում սեփական հնարավորությունների մասին, վստահություն սեփական ուժերի և կարողությունների հանդեպ: Ընդունակ է ինքնակազմակերպվելու, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնասպասարկման հմտություններ: Գործողություններում դրսևորում է նպատակաուղղվածություն և կենտրոնացվածություն: Երեխան ճանաչում է սեփական և այլոց հույզերը, կարողանում է կառավարել սեփական հույզերը: Ճանաչում է մեծահասակների և հասակակիցների փոխհարաբերություններում սահմանված վարքային կանոնները և դրսևորում է սոցիալապես ընդունված նորմերին համապատասխան վարք: Շփման մեջ նախաձեռնող և կառուցողական է, դրսևորում է ընկերակցելու, համագործակցելու հմտություններ.

- **ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն՝**

Նախադպրոցական տարիքում երեխան տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին. դրսևորում է հարգանք և հոգատարություն շրջապատի հանդեպ, գնահատում է արարքների բարոյական ուղղվածությունը: Ճանաչում է հայրենիքը, Հայաստանի խորհրդանիշները (դրոշ, զինանշան, օրհներգ), դրսևորում է սեր և նվիրվածություն հայրենի երկրի հանդեպ: Ունի տարրական պատկերացումներ սեփական իրավունքների ու պարտականությունների մասին.

- **մշակութային կարողունակություն՝**

Երեխան կարողանում է գնահատել գեղեցիկը, ճանաչում և վերլուծում է հանրահայտ հայ և արտասահմանյան մանկագիրների գեղարվեստական ստեղծագործությունները, ճանաչում է ազգային և համաշխարհային մշակութային նմուշների ինքնատիպությունը: Դրսևորում է ընդգծված հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ, ունակ է երաժշտության,

կերպարվեստային գործունեության տարբեր տեսակների, ազգային տոների ու ավանդույթների միջոցով արտահայտելու սեփական հույզերը, զգացմունքներն ու տպավորությունները.

- **ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն՝**

Երեխան պատկերացում ունի ֆիզիկական վարժությունների առողջարարական նշանակության, առողջ սննդի, առողջ ապրելակերպի վարման հիմնական կանոնների՝ օրգանիզմի կոփման, օրվա ռեժիմի, հիգիենիկ կանոնների, ճիշտ կեցվածքի պահպանման մասին: Ընկալում է ֆիզիկական վարժությունների ճիշտ կատարման ձևը, ճանաչում և տարբերում է ամառային և ձմեռային մարզաձևերը: Ընդհանուր պատկերացում ունի շարժողական ընդունակությունների, տարածված մարզաձևերի, մարզագույքի, սպորտային հանդերձանքի մասին, ճանաչում է հայ և այլազգի անվանի մարզիկներին: Երեխան ընդունակ է ճիշտ կատարելու մարմնամարզական, աթլետիկական վարժություններ, տարաբնույթ շարժողական գործողություններ շարժախաղերում, մարզախաղերում, շարժողական ակտիվության այլ ձևերում: Դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և պահպանում է առողջ ապրելակերպի վարման կանոնները: Երեխան ինքնուրույն կատարում է նմանողական շարժումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ՝ առանձին, զույգերով, մարզագույքով: Վարժությունների կատարման ընթացքում, շարժախաղերում, թիմային խաղերում դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն:[2]

[2] «Նախադպրոցական մանկավարժություն» - /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/ Երևան 2008 թ. էջ 64

ԳԼՈՒԽ 2: ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2.1 Նախադպրոցականների ստեղծագործական կարողունակությունների հիմնական էությունը

Խոսելով կարողությունների ձևավորման մասին, անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե երբ և որ տարիքից պետք է զարգացնել երեխաների ստեղծագործական ունակությունները: Հոգեբանները տարբեր ժամկետներ են անվանում՝ 1,5-5 տարի: Կա նաև վարկած, որ անհրաժեշտ է զարգացնել ստեղծագործական ունակություններ շատ փոքր տարիքից: Այս վարկածը հաստատում է գտնում ֆիզիոլոգիայում:

Բանն այն է, որ երեխայի ուղեղը հատկապես արագ է աճում և "հասունանում" կյանքի առաջին տարիներին: Այս հասունացումը, այսինքն. նրանց միջև անատոմիական կապերի ուղեղի բջիջների քանակի աճը կախված է ինչպես գոյություն ունեցող կառույցների բազմազանությունից և ինտենսիվությունից, այնպես էլ այն բանից, թե որքանով է շրջակա միջավայրը խթանում նորերի ձևավորումը: "Հասունացման" այս ժամանակահատվածը արտաքին պայմանների նկատմամբ ամենաբարձր զգայունության և պլաստիկության ժամանակն է, զարգացման ամենաբարձր և ամենալայն հնարավորությունների ժամանակը: Սա առավել բարենպաստ ժամանակահատվածն է մարդկային կարողությունների ամբողջ բազմազանության զարգացումը սկսելու համար: Բայց երեխան սկսում է զարգացնել միայն այն ունակությունները, որոնց զարգացման համար կան խթաններ և պայմաններ հասունացման այդ "պահի" համար:

Հոգեբանական տեսանկյունից Նախադպրոցական մանկությունը բարենպաստ ժամանակաշրջան է ստեղծագործական կարողությունների զարգացման համար, քանի որ այս տարիքում երեխաները չափազանց հետաքրքրասեր են, նրանք մեծ ցանկություն ունեն իմանալու իրենց շրջապատող աշխարհը: Եվ ծնողները խրախուսելով հետաքրքրասիրությունը, երեխաներին գիտելիքներ հաղորդելով, նրանց ներգրավելով տարբեր գործունեության մեջ, նպաստում են երեխաների փորձի ընդլայնմանը: Իսկ փորձի և գիտելիքների կուտակումն անհրաժեշտ նախապայման է

հետագա ստեղծագործական գործունեության համար: Բացի այդ, նախադպրոցական տարիքի երեխաների մտածողությունը ավելի ազատ է, քան մեծահասակ երեխաների մտածողությունը: Այն դեռ չի ջախջախվել դոգմաներով և կարծրատիպերով, այն ավելի անկախ է: Իսկ այդ որակը պետք է ամեն կերպ զարգացնել: Նախադպրոցական մանկությունը նույնպես զգայուն շրջան է ստեղծագործական երեւակայության զարգացման համար: Վերը նշված բոլորից կարելի է եզրակացնել, որ նախադպրոցական տարիքը հիանալի հնարավորություններ է տալիս ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Եվ մեծահասակների ստեղծագործական ներուժը մեծապես կախված կլինի նրանից, թե որքանով են օգտագործվել այդ հնարավորությունները:[3]

Երեխաների ստեղծագործական զարգացման կարևորագույն գործոններից մեկը նրանց ստեղծագործական ունակությունների ձևավորմանը նպաստող պայմանների ստեղծումն է: Հիմնվելով մի քանի հեղինակների, աշխատանքների վերլուծության վրա. առանձնացնենք երեխաների ստեղծագործական ունակությունների հաջող զարգացման վեց հիմնական պայմաններ: Ստեղծագործական ունակությունների հաջող զարգացման առաջին քայլը՝

1. երեխայի վաղ ֆիզիկական զարգացումն է.վաղ լող, մարմնամարզություն, վաղ քայլել: Այս փուլում երեխան պետք է շարունակ զարգանա: Այնուհետև վաղ ընթերցում, հաշվում, վաղ Ծանոթություն տարբեր գործիքների և նյութերի հետ:
2. երկրորդ կարևոր պայմանը երեխաների զարգացումից առաջ միջավայրի ստեղծումն է: Անհրաժեշտ է, որքան հնարավոր է, երեխային նախապես շրջապատել այնպիսի միջավայրով և հարաբերությունների այնպիսի համակարգով, որը կխթանի նրա ամենաբազմազան ստեղծագործական գործունեությունը և աստիճանաբար կզարգացնի նրա մեջ հենց այն, ինչը համապատասխան պահին ի վիճակի է առավել արդյունավետ զարգանալ:
3. Երրորդ, չափազանց կարևոր պայմանը ստեղծագործական ունակությունների արդյունավետ զարգացման համար բխում է ստեղծագործական գործընթացի

[3] «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/ Երևան 2010թ. էջ 138

բնույթից, որը պահանջում է ուժերի առավելագույն լարվածություն: Սա այն ժամանակահատվածն է աշխարհը ճանաչելու գործընթացը շատ ինտենսիվ է, բայց երեխան չի կարող օգտագործել մեծահասակների փորձը, քանի որ դեռ ոչինչ հնարավոր չէ բացատրել: Հետևաբար, այս ժամանակահատվածում ավելի քան երբևէ կարևոր է զբաղվել ստեղծագործական գործունեությամբ:

4. Ստեղծագործական ունակությունների հաջող զարգացման չորրորդ պայմանը երեխային մեծ ազատություն տալն է գործունեության ընտրության, գործերի փոփոխության, մեթոդների ընտրության և այլնի մեջ: Այնուհետև երեխայի ցանկությունը, Նրա հետաքրքրությունը, հուզական աճը կծառայեն հուսալի:
5. Բայց երեխային այդպիսի ազատություն տալը չի բացառում, այլ, ընդհակառակը, ենթադրում է մեծահասակների ոչ թե խոչնդոտող այլ խելացի, բարեգործական օգնություն, Սա ստեղծագործական ունակությունների հաջող զարգացման հինգերորդ պայմանն է: Այստեղ ամենակարևորը ոչ թե ազատությունը ամենաթողության վերածելն է, այլ օգնությունը դեպի ճիշտ ուղի:
6. ստեղծագործական ունակությունների հաջող զարգացման վեցերորդ պայմանը ջերմ ընկերական մթնոլորտն է ընտանիքում և երեխաների թիմում: Մեծահասակները պետք է ստեղծեն անվտանգ հոգեբանական հիմք ' երեխային ստեղծագործական որոնումներից և սեփական հայտնագործություններից վերադարձնելու համար: Կարևոր է անընդհատ խթանել երեխային ստեղծագործելու համար կարեկցանք ցուցաբերել իր անհաջողությունների նկատմամբ, համբերատար լինել նույնիսկ իրական կյանքում անսովոր տարօրինակ գաղափարների նկատմամբ:[4]

[4] Дыбина О. В. Неизведанное рядом: занимательные опыты и эксперименты для дошкольников. М., 2005.с 67

2.2. Նախադպրոցականների ստեղծագործական կարողունակությունների կիրառելիությունը դիտակտիկ նյութերի միջոցով

Կան բազմաթիվ վարժություններ և խաղեր, որոնք ուղղված են նախադպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Որպեսզի պարապմունքներն ունենան դրական ազդեցություն, և երեխաները կանոնների մեջ չշփոթվեն, բավական է ընտրել մի քանի խաղ և վարժություն՝ աստիճանաբար բարդացնելով և լրացնելով դրանք: Երբ փոքրիկ մարդը լիովին կհարմարվի առաջարկվող առաջադրանքներին (և, հավանաբար, կսկսի կորցնել հետաքրքրությունը դրանց նկատմամբ), խաղերի ցանկը պետք է փոխել՝ բացահայտելով նոր հորիզոններ, որպեսզի երեխան «նվաճի» դրանք:[5]

Իհարկե, նախադպրոցական տարիքի երեխաները չգիտեն ստեղծագործական երևակայության տեխնիկաների անվանումները: Այնուամենայնիվ, վաղ մանկությունից երեխաները դրանց ծանոթանում են ծնողների միջոցով, ովքեր հեքիաթներ են կարդում: Եվ ժամանակի ընթացքում երեխաներն ակտիվորեն օգտագործում են այս տեխնիկան՝գեղարվեստական կերպարներ ստեղծելու համար իրենց սեփական հեքիաթների և պատկերացումների հիման վար: Կիրառելով իրական առարկաները՝ երեխան հորինում է երևակայական իրավիճակ: Օրինակ երեխան, փայտին նստելով, իրեն պատկերացնում է ձի հեծած:

Ուստի հաշվի առնելով այս ամենը անհրաժեշտ է երեխաների հետ իրականացնել գործնական պարապմունքներ, յուրաքանյուր պարապմունքի ընթացքում կիրառելով տարբեր խաղեր և մեթոդներ, որոնք կարող են նպաստել նրանց ստեղծագործական զարգացմանը:

[5] Գյուլամիրյան Ջ., «Խաղալով սովորենք», Երևան, 2009թ., 15 էջ:

Պարապմունքի ընթացք

Հետազոտության շրջանակներում պլանավորել եմ ինտեգրված պարապմունք ԻՇԱ (ինձ շրջապատող աշխարհը), ԽԶ (խոսքի զարգացում) և ԿԿԱ (կերպարվես կառուցողական աշխատանք) ծրագրային բաժիններից կազմված։

Աշխատել եմ ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգով, պարապմունքի նախապատրաստական մասում կիրառել եմ ԳՈԻՍ (գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի) մոդելը։

Պարապմունքը անց եմ կացրել ավագ խմբում։

Պարապմունքը վարել եմ դաստիարակի օգնականի աջակցությամբ, իսկ նախապատրաստական մասում օգնել են նաև ծնողները։

Խմբասենյակում ապահովել եմ զագացնող առարկայական միջավայր, տեղադրել եմ անհրաժեշտ ցուցադրական և դիդակտիկ նյութեր, նկարներ, բաժանել եմ անհրաժեշտ քանակությամբ բաղադրիչ նյութեր։ Ստեղծել եմ պարապմունքը սահիկաշարի միջոցով անցկացնելու հնարավորություն։

Պարապմունքի պլան

Տեսակը՝ ինտեգրված

Ծրագրային բաղադրիչները՝ ԻՇԱ, ԿԿԱ, ԽԶ

Թեմա՝ Առողջ և անառողջ սնունդ

Ավագ խումբ՝ 5-6տարեկան

Տևողությունը՝ 25-30րոպե

Նպատակը՝

- նպաստել սննդի հետ կապված ճանաչողական հետաքրքրությունների զագացմանը,
- ծանոթացնել սննդի տեսակներին,
- հարստացնել բառապաշարը՝ քաղցրավենիք, կաթնամթերք, մսամթերք ընդանրացնող բառերով,

- ծանոթացնել սննդի հետ կապված անվտանգ օգտագործման ձևերին։

Վերջնարդյունքը՝

- տարբերիառողջ և անառողջ սնունդը **(ԻՇԱ),**
- ստեղծի աշխատանքներ ըստ թեմայի և գաղափարի (ԿԿԱ),
- արտահայտի իր կարծիքը՝ դրսևորելով քննադատական վերաբերմունք(ԽՋ)։

Կապը չափորոշչի հետ՝ ԽՀ(բ), Ի(գ,զ), ՀՍԱ (բ),ԽԱԱ(գ,է)

Կարողունակությունների զարգացում

- ✓ լեզվական և հաղորդակցական կորողություն
- ✓ Ճանաչողական և մոտիվացնող կարողություն
- ✓ Տնտեսական կարողություն
- ✓ Մշակութային կարողություն

Նյութեր՝ ունենալ առողջ և անառողջ սննդի տեսակներ պատկերող նկարներ և քարտեր, բնական սննդամթերք, ծեփատախտակ, խմոր, թաց անձեռոցիկ, առողջ և հիվանդ ատամներ պատկերող նկարներ։



Նախապատրաստական աշխատանք՝ այցելել մոտակա «Բոնուս» առևտրի կենտրոն, ծանոթացնել սննդի բաժնում վաճառող սննդամթերքի տեսակներին՝ կաթնամթերք, մսամթերք, քաղցրավենիք և կատարել առևտուր։

Նախապատրաստական մասում տրվող հարցերը՝ ԳՈՒՍ մեթոդով

1. Ի՞նչ ծանոթ մթերքներ եք տեսնում այստեղ,
2. Ինչի՞ց է պատրաստված կաթնամթերքը,
3. Ինչի՞ց է պատրաստված մսամթերքը,
4. Ինչի՞ց է պատրաստված քաղցրավենիքը,
5. Որտե՞ղից են բերվել մրգերը և բանջարեղենները։
6. Ո՞ր տեսակի հյութերն եք սիրում՝ գազավորված թ՞ե բնական
7. Կարո՞ղ ենք մի անգամից վերցնել սնունդ և դուրս գալ
8. Ինչու՞ չենք կարող,
9. Ի՞նչ պետք է անենք, եթե ընտրել և վերցրել ենք որևէ բան։

Ի՞նչը հետաքրքրեց Ընդհանրացնելով երեխաների պատասխանները ասել, որ հիմա անպայման պետք է մոտենանք դրամարկղին և վճարենք գնումների համար։

Վերադառնալուց հետո, խմբասենյակում հարցնել

- Ի՞նչն իրենց դուր եկավ
- Ի՞նչ կուզեին իմանալ
- Կուզեի՞ք իմանալ սննդի, որ տեսակներն են օգտակար մեր առողջության համար, և որոնք են վնասակար։ Արդյո՞ք մեր գնած մթերքները օգտակար են…

Լսելով սաների պատասխանները նշել, որ առողջ և անառողջ սննդի տեսակներին կծանոթանան հաջորդ օրվա պարապմունքին, որի ընթացքում կսովորեն ինչպես ճիշտ ընտրել և կիրառել սննդի տեսակները։

Պարապմունքի ընթացքը

Քայլ 1. Խթանման փուլ

- Զրույցի միջոցով վերհիշել էքսկուրսիայի ընթացքում կատարվածը
- Հիշեցնել որ երեխաները ցանկանում էին իմանալ արդյո՞ք գնել ենք օգտակար մթերքներ

Քայլ 2. Իմաստի ընկալման փուլ

Սաների հետ զրուցել սննդի տեսակների մասին: Հարցնել «Ի՞նչ համեղ ուտելիքներ են սիրում», «Ինչու՞»

Լսել սաների պատասխանները

Նշել, որ կան շատ գրավիչ և համեղ ուտելիքներ, բայց նրանցից ոմանք կարող են վնասել մեր առողջությունը:Սահիկի միջոցով ցուցադրել առողջ և անառողջ սննդի նկարներև մեկնաբանել նշանակությունը:

Նշել, որ առողջ սնունդը համեղ է և այն օգտագործելու դեպքում մարդիկ չեն հիվանդանում, աշխույժ են լինում, ուժեղ և գեղեցիկ:

Անառողջ սնունդը թեկուզ համեզ է և գրավիչ, սակայն շատ ուտելու դեպքում այն վնասում է մեր առողջությունը ր մենք հիվանդանում ենք:

Իսկ փոքրիկների մոտ առաջինը վնասվում են ատամները, եթե նրանք շատ քաղցրավենիք են ուտում:

Հարցնել՝«Ի՞նչ եք անում, երբ ցավում է ձեր ատամը»:

Լսել սաներին: Ցույց տալ նկարը և հարցնել.

«Ինչ եք կարծում ո՞ր ատամիկն է առողջ սնունդ կերել, և ո՞ր ատամիկն է անառողջ սնունդ կերել»: Լսել պատասխանները և հարցնել՝«Ինչի՞ց կռահեցիք»:

Առաջարկել սաներին «Բութ մատիկ» ձևավորող գնահատման գործիքի միջոցով արտահայտել իրենց կարծիքները՝ գնահատելով «ժպտացող և լացող ատամիկները»։

Երեխաների ուշադրությունը հրավիրել ամենակարևոր տեղեկատվության վրա հաղորդելով, որ միշտ պետք է ընտրել թարմ այլ ոչ թե փտած և ժամկետանց մթերք, և օգտագործելուց առաջ անհրաժեշտ է լավ լվանալ դրանք։

Հաջորդիվ անցկացնել ֆիզկուլտդադար և մատնային վարժանք՝ «Մատիկներով խաղանք» (խոսքերն զուգորդել համապատասխան շարժումներով)

Բթամատը լվացվում է,
Ցուցամատը սրբվում է,
Միջնամատը սանրվում է,
Մատնեմատը ապուր եփում,
Իսկ այ փոքրիկ կարճ ճկույտը
Մայն ուտում է ու պարում

Փուլ 3. Կշռադատմանփուլ

Հարցնել՝ «Ի՞նչ սովորեցինք այսօր»

Տալ արտահայտելու իրավունքկիրառելով «Խոսող կոճակներ» մեթոդը։ Առաջարկել սաներին միմյանց հարցեր ուղղել՝ կիրառելով՝ «Արտաքին և ներքին շրջաններ» կամ «Դեմ առ դեմ» մեթոդը։

- Առաջարկել ցանկացողներին խառը մթերքներով լիքը զամբյուղի միջից ընտրել օգտակար մթերքները և նրանցից (դաստիարակի օգնականի օգնությամբ) աղցան պատրաստել
- Մյուս սաներին բաժանել երկու խմբի.
    i. Խմբին առաջարկել տարբերակել և խմբավորելառողջ և անառողջ սննդի նկարները
    ii. Խմբին առաջարկել ծեփել իրենց սիրելի ուտելիքը

Մինչև խմբերը աշխատում են , առավել պասիվ երեխաների հետ «Ի՞նչ է կերել ատամիկը» դիդակտիկ խաղը»

Դիդակտիկ խաղ՝ Ի՞նչ է կերել ատամիկը

Նպատակը՝ ամրապնդել սննդի օգտակարության և վնասակարության մասին ստացած գիտելիքները

Ընթացքը՝ սննդի նկար քարտերը տեղադրել համապատասխան ատամիկի վրա։



Թիմային աշխատանքը ավարտելուվ հետո սաները շրջում են աշխատանքային կենտրոններում և լսելով ընկերների մեկնաբանությունները գնահատում են նրանց աշխատանքը ծափողջյուններով։

Իսկ վերջում համտեսում են ընկերների կողմից սիրով պատրաստված ամենա առողջարար և ամենա համեղ աղցանը։

Դիտորդների դիտարկման վերլուծությունըպարապմունքի մասին

Պարապմունքը դիտարկել են հաստատության տնօրենը և մեթոդիստը։ Ըստ դիտարկման արդյունքների դաստիարակը հասել է պարապմունքի նպատակների իրականացմանը և աշխատանքներու ուղղված էին լեզվական, հաղորդակցական, ճանաչողական, մոտիվացիոն, տնտեսական, մշակութային կարողությունների զարգացմանը։

Երեխաները իրենց զգում էին ազատ, անկաշկանդ։ Ապահովված էր դրական, հուզական մթնոլորտը։ Բոլոր երեխաները ներգրավված էին պարապմունքի ընթացքում կատարվող աշխատանքների մեջ։

Դաստիարակը ապահովում էր հետադարձ կապ և արձագանքում էր յուրաքանչյուր երեխայի կարիքներին։

Դաստիարակի կողմից հետազոտվող թեման, այն է՝ <<Նախադպրոցականի կարողությունների ձևավորման հիմնահարցը>>, նախադպրոցական կրթության մեջ մեծ կարևորություն ունի, քանի որ այն միտված է նախադպրոցական տարիքի ավարտին սանից ակնկալվող կարողությունների զարգացմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը պետք է համահունչ լինի վաղ մանկության զարգացման ոլորտում Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող ժամանակակից կարևորագույն գործընթացներին: Չափորոշիչը միտված է երեխաների իրավունքների պաշտպանությանը, համընդհանուր ներառմանը, կրթության որակի բարձրացմանը, բազմազանության խթանմանը, սահուն անցմանը դպրոցին և այլն:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը և երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին արձագանքելու, յուրաքանչյուր երեխայի անձը հարգելու, համատեղ ուսումնառության գործընթացը խթանելու հնարավորություն է ընձեռում:

Ամփոփելով կատարած հետազոտության արդյունքները, եկանք այն եզրակացությանը, որ ուսուցողական դիդակտիկ խաղերի միջոցով հնարավոր է ձևավորել և զարգացնել աշակերտների ստեղծագործական կարողությունները, մասնավորապես ստեղծագործական հմտությունները: Խաղերն օգնում են մասնագետին առավել մատչելի տարբերակով ներկայացնելու պարապմունքի թեմատիկան՝ ձևավորելով երեխայի երևակայելու, զգացմունքներն ու գործողությունները ինքնուրույն կարգավորելու ունակությունները: Այսպիսով՝ թեմատիկ խաղերի կարևոր նշանակությունն է խորացնել սաների ճանաչողական հետաքրքրությունները, ստեղծագործական կարողունակությունները, երեխաներն դարձնել առավել հետաքրքիր, զարգացնել նրա ուսումնառության դրդապատճառները, բարձրացնել սովորելու ցանկությունը:

Օգտագործված գրականության ցանկ՝

1. «Նախադպրոցական մանկավարժություն» - /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/ Երևան 2008 թ.
2. Գյուլամիրյան Ջ., «Խաղալով սովորենք», Երևան, 2009թ.,
3. Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/ Երևան 2010թ
4. Дыбина О. В. Неизведанное рядом: занимательные опыты и эксперименты для дошкольников. М., 2005.
5. https://www.arlis.am/ Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշում 13 մայիսի 2021 թվական.